02/07/2026թ.
ժամը 10:00

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ
ք. Երևան, Արտաշիսյան 46/1

թիվ՝ 2

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# «ՍԱԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/41» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

*Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝*

**գնահատող հանձնաժողովի նախագահ**

Ա. Մինասյան /տնօրենի խորհրդական/

**հանձնաժողովի անդամներ**

Ա. Մուրադյան /նյութատեխնիկական աշխատանքները ապահովման համակարգող/

Ա. Սեյրանյան /գնման ընթացակարգերի որակի վերահսկման մասնագետ/

Դ. Սարգսյան /որակի, տվյալների կառավարման և փոխհատուցման բաժնի ղեկավար/

Օ. Մուշեղյան /պահեստապետ/

**հանձնաժողովի քարտուղար՝**

Վ. Գրիգորյան /գնումների համակարգող/

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:*

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մինասյան**

**1. Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար մասնաշենքի 2-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍԱԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/41 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

1.2 Գնման ընթացակարգի հրավերը, 04.06.2026թ-ին հրապարակվել է www.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ):

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Կազմակերպության ՀՎՀՀ, գտնվելու վայրը, էլ. փոստի հասցեն,հեռ. |
|---|---|---|
| 1 | Պրեմիում Շին ՍՊԸ և Արտաշատի ԷՑՇ ՍՊԸ կոնսորցիում | ՀՎՀՀ 04234373, ՀՀ, Արարատի մարզ Ոստան համայնք Արարատյան 9. Հեռ. +37493314808, premium_shin@mail.ru<br>ՀՎՀՀ 04201249, ՀՀ, Արարատի մարզ Ոստան համայնք Երկաթուղային 14, հեռ. +37477922522, S.Artist@mail.ru |
| 2 | Էլդոգար ՍՊԸ | ՀՎՀՀ 09210321, Սյունիքի մարզ.ք.Գորիս, Յոլյան 30 , հեռ. +37493426693 eldogare@yandex.ru |
| 3 | ԻՄՈՇԻՆ ՓԲԸ | ՀՎՀՀ 01072167 , . Երևան , Ավան -Առինջ , 3/5 2 , հեռ. +37477824282 info.imoshin@gmail.com |
| 4 | Մանուկյան Շին ՍՊԸ | ՀՎՀՀ 04231692 , ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, Այվազովսկու փող.18 , հեռ. +37498524269 , manukyanshin@mail.ru |

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

**Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետը՝ ՍԱԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/41 ծածկագրով գնման ընթացակարգի նիստը կասեցնել մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ուսումնասիրելու նպատակով:
2) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունել որոշում ***կողմ 3 (երեք), դեմ 0 (զրո)*** ձայներով

**1. Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը:

**2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1 մասնակիցների կողմից ներկայացրած էլեկտրոնային հայտերը Համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 մասնակիցների գնման ընթացակարգի մասնակցելու համար ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ

**«ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ**

Կցված չէ էներգետիկական լիցենզիան, համատեղ գործունեության պայմանագրի, լիցենզիաների և բանկային երաշխիքի ֆայլերը չեն պարունակում էլեկտրոնային ստորագրություն:

**«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ**

Սխալ է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, կցված չեն շինարարական և էներգետիկական լիցենզիաներն իրենց ներդիրներով:

**«ԻՄՈՇԻՆ» ՓԲԸ**

Կցված չեն շինարարական և էներգետիկական լիցենզիաներն իրենց ներդիրներով, բանկային երաշխիքի ֆայլը չի պարունակում էլեկտրոնային ստորագրություն:

**«Մանուկյան Շին» ՍՊԸ**

Կցված չեն շինարարական լիցենզիայի ներդիրը և էներգետիկական լիցենզիան, բանկային երաշխիքի ֆայլը չի պարունակում էլեկտրոնային ստորագրություն:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

**3. Գնման առարկաների գնման գները և մասնակիցների առաջարկած գները**

ՀՀ դրամ

| չ/հ | գնման առարկայի անվանումը | մասնակիցներ | գնային առաջարկները | | | գնման գին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհ. գինը | |
| 1 | մասնաշենքի 2-րդ հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքների | Պրեմիում Շին ՍՊԸ և Արտաշատի ԷՑՇ ՍՊԸ կոնսորցիում | 34900000 | 6980000 | 41880000 | 43630150 |
| | | Էլդոգար ՍՊԸ | 26833300 | 5366660 | 32199960 | |
| | | ԻՄՈՇԻՆ ՓԲԸ | 29800000 | 5960000 | 35760000 | |
| | | Մանուկյան Շին ՍՊԸ | 27862500 | 5572500 | 33435000 | |

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

**4. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների վերաբերյալ.**

4.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

**5. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին.**

5.1 Հարցումներ չեն ստացվել:

**6. Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին.**

6.1 Բողոքներ չեն եղել

**7. Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին.**

7.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

**Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետը՝ նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները

2) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 01.07.2026թ.ժամը՝ 10:00-ին:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ վերջիններս, կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ ընտրված մասնակիցների հայտերը, գնահատել բավարար:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ՍԱԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/41 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել.

- Էլդոգար ՍՊԸ-ին,

3) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր,

4) Հաստատել ՍԱԲԿ-ԳՀԱՇՁԲ-26/41 ծածկագրով ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը,

5) Անգործության ժամկետի ավարտից հետո չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակիցներին.

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով.

***Հանձնաժողովի նախագահ՝*** ____________ **Ա. Մինասյան**

***Հանձնաժողովի անդամներ՝*** ____________ **Ա. Մուրադյան**

____________ **Ա. Սեյրանյան**

____________ **Դ. Սարգսյան**

____________ **Օ. Մուշեղյան**

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ____________ **Վ. Գրիգորյան**